

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒԹ Ի Ի Ն

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Միութեանս Բարեբար Անդամ ողորացեալ Արմէն Դերձակեանի կրթաթոշակը, ըստ Կեդր. Վարչութեան որոշման, յառաջիկայ դպրոցական տարեշրջանին պիտի բաշխուի արժանաւոր աշակերտներու, իտականարին թաղձանրին համաձայն. այս կրթաթոշակը կը յատկացուի արժանաւոր այլ կաթոս՝ ծնունդով Ամերիկահայ պատանիներու եւ երիտասարդներու, որոնք կ'ուսանին Ամերիկեան Գոլէմներու կամ Համալսարաններու մէջ:

Ներկայ տարեշրջանին կրթաթոշակի տրամադրելի գումարն է 1000 տոլար:

Այս կրթաթոշակին բաշխումը յանձնուած ըլլալով Միութեանս Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովին, պայմաններուն մանրամասնութիւնները ի մօտոյ անոր կողմէ պիտի հրատարակուին տեղական մամուլին մէջ:

Նիւ Եորք, 22 Օգոստոս 1955

ԴԻԻԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՁ. ԺՈՂՈՎԻ

Կ Ո Ձ

Ս Ս Ա Ն Ա Յ Ի Հ Ա Յ Ո Յ Պ Ա Տ Մ ՈՒԹ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր

Սիրելի Հայրենակիցներ,

Վերջացող ըսան տարիներու ընթացքին, թաղմաթիւ հայաքաղաքներու պատմութիւնները զրի առնուեցան եւ հրատարակուեցան: Այս ծիւղով անոնք կորուստէ փրկուելով դարձան ընդհանուր հայոց պատմութեան սեպհակաւորութիւն: Ամէն օր մամուլէն կը տեղեկանանք նաեւ՝ թէ թաղմաթիւ այլ թաղաքներու եւ գիւղերու պատմութիւնները զրի կ'առնուին: Բնական է ի շարս այլ հայրենակիցներու՝ Ատանացիներն ալ անտարբեր չլին կրնար միայ հանդէպ իրենց անցեալին:

Ուրախ ենք որ Ատանացիներու Պէյրութի Կեդրոնական Վարչութիւնը որոշած է անպայմանօրէն ունենալ չիլիկիոյ արդի ժամանակներու այս մայրաքաղաքին պատմութիւնը՝ որ մեր օրերուն թատերաժայր հանդիսացաւ ազգային տան զեղեցիկ երազներու, բայց եւրոպական քաղաքականութեան զօհ երթալով իսպառ կորսուեցաւ մեզի համար:

Հետեւաբար Հայրենակցական Միութեան Կեդրոնին եւ Ուօթըրթաունի Ատանայի Հայ Ուսումնասիրաց Միութեան Բանակցութիւններէն յետոյ զայն պատրաստելու դժուարին գործը մեզի վիճակուեցաւ՝ որպէս հայրենակից:

Ուստի, նկատելով գործին խիստ կարեւորութիւնը եւ դժուարութիւնները, ներկայիս սրտազին կոչ կ'ուղղենք մեր բոլոր հայրենակիցներուն, քաբեկամներուն, ծանօթներուն, գրչի մշակներուն եւ առհասարակ Ատանայի հետ առնչութիւն ունեցող բոլոր հայերուն որպէսզի մեզի օգնեն զրկելով յուշեր, ուսումնասիրութիւններ, վաւերաթուղթեր, տեղեկագրութիւններ, կենսագրութիւններ, նկարներ, տեղական սովորութիւններու եւ ընկերային ու ընտանեկան կենցաղի շուրջ դուրսգններ եւ նկարագրականներ եւ այլ նիւթեր՝ որոնք սահմանուած են մանկու Ատանայի նման խիստ կարեւոր քաղաքի մը պատմագրքին մէջ. որոնք սրտազինս պիտի գնահատուին մեր կողմէ եւ երախտագիտութեամբ պիտի յիշատակուին պատմագրքին մէջ:

Սպասելով մեր ազգասէր հայրենակիցներու եւ քաբեկամներու դրական աջակցութեան՝

Մնամ Տիրաւանդ սիրոյ ողջունի

Աղօթաբար՝

ԲԱՐԳԷՆ ՔԷՆՅ. ՄԱԳՈՒՏԵԱՆ

Հասցէ՝

Rev. Papken Maksoudian

411 A Medford Street

Somerville 45, Mass., U. S. A.



« سیوت » مجله ارمنیة شهریه ، دینیة ، ادبیة ، ثقافیه ، للغة والبیان